Վալերկայ և կղերականք իւր ընկալան զնա եկեղեցական մեծ հանդիսիւ 'ի դրանէ քաղաքին մինչ 'ի Տաճարն Ս. Յարութեան խուռն բազմութեամբ ժողովրդոց. շրջեցաւ նա ջերմեռանդութեամբ յամենայն տնօրինական տեղիս, պատուեաց զեկեղեցիս եւ զեկեղեցականս ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի, շնորհեաց Յովհաննու Պատրիարքին Հայոց իբրեւ ընծայ մատանի ծանրագին, յորոյ վերայ գրեալ էր անուն Նորին մեծութեան, և այսպիսի ուրախութեամբ դարձ արար անդրէն 'ի Յոպպէ, և անտի յաշխարհն իւր։ Սա եղեւ Կայսր Մեքսիքայի, բայց թշնամիք նորա սպանին 'ի հարուածս հրացանի։

Քիրիլլոս Յոյն Պատրիարքն Երուսաղեմի յետ ընդունելոյ զերկրորդ հրովարտակս (Խաթթի Շէրիֆ) 'ի Սուլթան Մէճիտ Արքայէ, զոր անուանեցին Statu-quo, յորոց երկրորդին թարգմանութիւնն եդաք 'ի նախընթաց գլուխն, հակառակ լատինական պահանջմանց դարձ արար յԵրուսաղէմ. և միաբանք իւր եկեղեցական փառօք և հանդիսիւ ընկալան զնա՝ տարեալ 'ի Տաճարն Ս. Յարութեան, ուր կատարեցան աղօթք և խնդրուածք վասն կենաց Արքայի։ Իսկ Հայք թէպէտեւ գրեցին յայնժամ 'ի Դուռն վասն այսր դիպուածոյ, և խնդրեցին պաշտպանութիւն սեփհականութեան իւրեանց, այլ շահեցան եւ ոչ ինչ, միայն Թէ-կէրբէ- Եպարքոսին շատացան. որոյ վասն Յոյնք յամենայն դէպս զինեցան և զինին ցարդ ընդդէմ Հայոց՝ յեցեալ 'ի զօրութիւնս այնր հրովարտակաց։ Սակայն աստ տուեալ սատկացաւ վէճն վասն Ս. Տեղեաց Երուսաղեմի, զի Պիոս Թ. Պապն Հռոմայ խորհրդով Լատին Պատրիարքին Երուսաղեմի ստիպէր զԿայսրն Գաղղիոյ ըզՆաբոլիոն Գ. առնուլ զբանալիս Ս. Տեղեաց՝ խոստացեալ նմա օծանել զինքն Կայսր Գաղղիոյ, եւ Նաբոլիոն թախանձէր զԴուռն Օսմանեան. բայց Նիկողոս Կայսրն Ռուսաց 'ի պաշտպանութիւն եկեղեցւոյն Յունաց ոչ երբէք զիջաւ 'ի կամս Օսմանեանց, այլ միշտ ընդդէմ եկաց խորհրդոց եւ բանից նոցա. զի Դուռն պնդեալ կայր 'ի բանս իւր թէ՝ իմ է երկիրն՝ ում կամիմ նմա տամ ըզ Ս. Տեղիս, որպէս յառաջագոյն ետու Յունաց, այժմ կամիմ տալ Լատինաց։ Այսպէս երկու Պատրիարքունք յե-